ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 124 – Ա **26 հունիսի 2018 թ.**

ԱՄԱՌՎԱ ԱՄԻՍՆԵՐԻՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼՈՂԱՓՆԵՐՈՒՄ ՏՈՒԺԱԾ ԱՆՁԱՆՑ ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՊԱՏՇԱՃ ԵՎ ԱՐԱԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՈՂԱՓՆԵՐՈՒՄ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

1) 2018 թվականի հուլիսի 1-ից օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում ժամը 09:00-ից 21:00-ը սահմանել լրացուցիչ հերթապահություն՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սևանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցով և բժշկական կենտրոնում ապահովել ծառայության անխափան աշխատանք.

2) աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակել և հաստատել հերթապահության ժամանակացույց և այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ.

3) կատարված աշխատանքների մասին յուրաքանչյուր երկուշաբթի տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Արտաշես Նիկոյանին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ